


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան դին և Գործարար 8 ՄԶԸ.
Վեցամսեյ և Գործարար 4 ՄԶԸ.
Չամսեյ և Գործարար 3 ՄԶԸ.
Չամսեյ և Գործարար 2 ՄԶԸ.
Չամսեյ և Գործարար 1 ՄԶԸ.



ԼԵՄԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պատերազմի ասպարեզին կարեւոր լուրեր չկան։ Եւրոպական հեռագիրը կը ծանուցանեն թէ Մեղդիւն և Ռուսիոյ մէջ քաղաքական յարաբերութիւնները կը ցրտանան։ Մեղդիւն պատերազմական գործող պաշտօնատունը մեծ քանակութեամբ առաքլման մը կը պատրաստել կուտայ։ Գերմանիոյ դեսպանացի մեծ մասն ի մտոյ Պէրլին կ'ապաստուին եղբոր Պիւս մարք իշխանին հետ խորհրդակցելու համար։

Բ. Դրան շրջաբերականն որով Եւրոպիոյ միջնորդութեանը կը դիմէր, տակաւին մեծ տերութեանց կողմէն պատասխան չ'ստացաւ։ Այս խոր լուռութենէն կը հասկցուի թէ տերութիւնը ազդարարութիւն կընեն Բ. Դրան ուղղակի Ռուսիոյ հետ բանակցելու։ Լէվընթ Զէրլա լրագիրը գիտցանական միջոց մը կ'առաջարկէ, այն է՝ մասնաւոր և առօրեայ յաղթութիւններ տանելու դրութիւնը թողուլ, և երկիրն աւերելով և ամայացնելով զորքն ետ քաշել, որ պէս զի իւր կեղծոյնն աւելի մօտեանայ, թշնամին պարտաւորի իւր կեղծոյնէն հեռանալ, և այդպէս թշնամւոյն յաղթելու վերջին ճիգ մը թափել։ Բայց ասիէ առաջ, կրտսէ պէտք է ուղղակի Ռուսիոյ հետ բանակցելով անոր պայմաններն հասկնալ։ Եթէ այն ժամանակ Արևելեան խնդրոյն մէջ շահ ունեցող տերութիւնը յիշեալ պայմանները մերժելու խորհուրդ տան Բ. Դրան, պէտք է որ դիմադրութեան միջոցներ ալ մատակարարեն անոր։ Իսկ եթէ յիշեալ տերութիւնը խորհուրդ տան Բ. Դրան որ այն պայմաններն ընդունի, այն ժամանակ թուրքին ոչ ևս անոնց շահերը նկատողութեան առնուլ պարտաւոր ըլլալով, միայն ինք իւր շահուց համեմատ կը դարձէ, եթէ դիմադրութիւնը շարունակել հարկ գատի, վերոյիշեալ գիտցանական եղանակը ձեռք կ'առնու և թշնամւոյն յարձակողական դրութիւնն սպառնալու ջանք կընէ։ Բայց Լէվընթ-Զէրլաի այս առաջարկած միջոցն ալ ազդու և փրկարար ըլլալէ խիստ հեռի է։ Ենթադրենք որ Բ. Դրանն ուղղակի բանակցութեան սկսաւ Ռուսիոյ հետ և տեսաւ որ անոր առաջարկած պայմանները խիստ ծանր են, ենթադրենք դարձեալ թէ Եւրոպական տերութեանց խորհուրդ հարցուց, ի՞նչ պատասխան պիտի առնու։ Եթէ երեք կայսերաց դաշնակցութիւնը սին խօսք մը չէ, Պէրլինէն չ'ուսացուիր որ քաջալերական պատասխան գայ, ինչպէս մինչև ցարդ

օրինակը տեսնուեցաւ։ Եւրոպական լրագրաց մէջ զանազան զրոյցներ կը տեսնուին վիեննայի արքունեաց վերայ, ուր գինուորական կուսակցութիւն մը կայ որ Մաճառաց հակառակական միտմանց դէմ՝ սաստկապէս կը մաքաւի։ Մարտի կոմիտեան չ'ընար ուրիշ պատասխան տալ, բայց եթէ այն ընդունաւ խօսիլ, զոր դեռ այս օրերս գործածեց Աւստրո-Հունգարական խորհրդարանաց պատգամաւորութեան առջև, ուր Ռուսիոյ դադարաւարտ խոնարհ համաձայնութիւն յայտնեց։ «Եւրոպիոյ մէջ, ըսաւ, դաշնադրութիւններէ զատ բան մ'ալ կայ որ ի հաշիւ առնուի է, այն է դրութիւնը։ դաշնադրութիւնները միմիայն ազդու կերպիւ պաշտպանել կարելի եղած ժամանակ կրնան պահպանուիլ»։ Միտրաի կոմիտեան ինքզինք սաստիկ դէմ հրատարակեց Արևելքի քրիստոնեայ ժողովուրդն այնպիսի վիճակի մը մէջ թողուլ, որով կարծել տայ թէ Աւստրո-Հունգարիա բնաւ չ'փախքիր անոնց բարեկեցութեանն ու երջանկութեանն, և որպէս թէ իւր շահը կը պահանջէ սր թուրքիոյ մէջ ներկայ վիճակն անխիտի մնայ։ «Ես այնչափ քաջութիւն չունիմ, ըսաւ, թուրքիոյ ներկայ վիճակն այն կերպիւ պաշտպանելու և Աւստրո-Հունգարական տերութեան դրութիւնն այնպիսի նպատակի մը գործածելու՝ զոր Եւրոպիոյ և նոյն իսկ թուրքիոյ մէջ նախադրող մը չ'ընար իրաւացի կամ կարելի կարծել։ Եւրոպիոյ մէջ տերութիւն մը չ'կայ որ Արևելեան խնդիրը լուծէ առանց Աւստրո-Հունգարիոյ գործակցութեան»։

Յիշատակու Յովսէփ Կայսեր դը Լուուր նախարարին այս խօսքերէն կրնայ հասկցուիլ թէ Աւստրիոյ քաղաքականութիւնը թուրքիոյ բաժանման դիմադրութիւն չ'ընար ինքն, ինչպէս Մաճառ լրագիրը ալ կը յայտարարեն։ Միտրաի կոմիտեան ընթացքն այսպիսով։ Աւստրիա գաւառներ կ'որոտած է, գուցէ Միտրաի տահաճութիւնը չ'ընար անոնց փոխաւրէն մէկ երկու գաւառ դրաւելու, որ պարզապէս Պոսնիոյ և Զէրսէքի առումը կը նշանակէ։ Այս ենթադրութեամբ, Բ. Դրան վիեննայի արքունիքէն ստանալիք պատասխանը գործնական օժանդակութեան յոյս մը չը կրնար տալ։ Կը մնայ Մեղդիւն, որ Ռուսիեան խնդրոյն համար սկզբէն ի վեր բաւական շարժումներ ըրած է, և որ հիմայ ալ կըսուի թէ պատրաստութիւններ կընէ։ Բայց անցեալները կարօն առումէն ետեւ լորտ Տէրալի Եփրատայ հովան իւր Զինգիստանի ճանապարհ պաշտպանելու առաջարկութիւն ներկայացնող պատգամաւորաց պատասխաններով՝ ոչ ասպարէն ըսաւ թէ քա

նի որ Սուէի ջրանցքն ազատ ըլլայ, Մեղդիւն ըստ բաւականի հաջորդակցութիւն կ'ունենայ Զինգիստանի հետ։ Այս պարագայից մէջ կրնայ ըլլալ որ Մեղդիւն ալ եթէ իւր հռչակաւոր հինգ կէտերուն Ռուսիա վրաս չ'հասցնէ, պատերազմի չ'մատակցի։ Դադարի իւր ներքին վերակազմութեամբն զբաղեալ՝ ներկայ խնդրոց մէջ կատարեալ չ'ընդունի կը պահէ և պարզ հանդիսատես կը լինի։ Իսկ իտալիա առաւել Պէրլինի արքունեաց կը հետեւի։ Կարելի է որ Ռուսիա իւր պայմանները չ'ապահովէ և Բ. Դրան ընդունելի ընէ։ Բայց եթէ այսպէս չ'ըլլայ, առ այժմ պատերազմին շարունակութեան զատ ուրիշ հաւանականութիւն չ'կայ։ Դուցէ ներկայ մեծ տօներուն առթիւ, ինչպէս նաեւ Չարին և Չարեփիլին բացակայութեան առթիւ, Ռուսաց բանակներուն զինուորական շարժումները դադարած ըլլան, սակայն կարելի է ի մօտոյ վերստին սկսիլ և յառաջնադարձութիւնը շարունակէ։ Ռուսը նորէն Լէվնան գրաւած են, և ըստ լրագրաց տնայն՝ Սօֆիայէն ալ խիստ հեռի չ'են։

Օսմանազուլուն անցնող Սերվիական դրաց նպատակն է եղբոր Նիշը պաշարել, վիտինի առջև Ռումէնացի հետ և հարաւային արեւմտեան կողմէն ալ Գարաւաղացի հետ միանալ։ Բայց այս շարժումը չ'են կրցած կատարել։ Շէհ-Քէյի զինուորական հրամանատարն երեքըքըթի աւուր թուով կը հեռագրէ թէ Սերվիացիք Լէվնան զորավարին թնդանութիւնն Օսմանեան ամրութիւնները ռմարկոնք, և երեք կողմէ յարձակմամբ դանդաղ առնելու փորձ փորձեց, բայց ետ մղուեցին։ Նոյն հրամանատարը կըսէ թէ Սերվիացիք մեծ զորութիւն ունենին Նիշափայի դաշտին Արևելեան և Արևմտեան կողմը։ Նիշի հրամանատար Հայի փաշան կը հեռագրէ թէ իւրքիւզի կողմը Սերվիացիք Լէվնայի ճանապարհին հաղորդակցութիւնները կ'որոտեն։ Սերվիոյ իշխանն իւր սպայակոյտին զլուխ Չար զորավարին հետ Արեւմտեան դաշտեր է։ Եսփորի կողմէն սահմանն անցնող Սերվիական զորքն աղբային պահպան զորք էր, որ կիբէի մը մէջ Օսմանեան զորաբանէ մը զարնուելով սաստիկ պարտութիւն մը կրեց և յետո նահանջեց։ Սերվիացիք իսկ կը խառնուին թէ այս կուռնոյն մէջ իրենցմէ երեք սպայ մեռեր են։

Յունաստան իւր զինուորական պատրաստութիւնները կը շարունակէ, բայց մինչև ցարդ ահագին զորութիւն մը ոտք հանած չէ։ Ընդ առնել կրկն զորաբանէն ոտնի, որը

գուցէ քսան հազար հոգիի հասնին։ Մէկ գունդն երկու վաշտ կը բաղկանայ, և մէն մի վաշտ 230 ական հոգիէ բաղկացեալ չորս գումարտակ ունի։ Քրուքի թնդանութիւնը և կրասի հրացաններ ալ կը գտնուին։ Կամաւորաց խումբեր կը կազմուին, և սասնց ալ նոր դէնք կը տրուի։ Գաղղիայէն տասն հազար հետեւակազորաց զգեստ խնդրուեցին։ Բայց այս պատրաստութիւնը դեռ որոշ նպատակ մը չ'ունին։

Մեղդիական Տէյլի Նիւզ լրագրին Բլէյնայի թղթակցին հետեւեալ տեղեկութիւնները կուտայ Օսման փաշայի Ռուսներէ գտած ընդունելութեան վրայ։

«Նիքոլա Մեծ գուրն Օսման փաշային նստած կառքը դիմաւորեց քանի մը վայրկեան երկու զորապետք իրարու երես նայեցան առանց խօսք մ'արտասանելու։ Յետոյ Մեծ գուրնը սը ձեռք կարկառեց, և Օսման փաշային ձեռքը բարեկամաբար սեղմելով ըսաւ։ «Բլէյնայի բրած պաշտպանութիւնիդ կը գովեմ, պատմութեան ամենէն գեղեցիկ զինուորական քաջագործութիւններէն մին է»։ Օսման փաշան տխրաբար ժպտեցաւ, և առանց վիրաւորեալ ըլլալուն նախընթաց դժուարութեամբ ոտքի վրայ ելաւ, քանի մը խօսք արտասանեց և նորէն նստաւ։ Ներկայ գտնուող Ռուս սպայք քանի մ'անդամ հոգեցին և յարգանք բարեկեցին զՕսման փաշան։ Նոյն միջոցին Ռուս մանիոյ կարողութիւնն ալ հասնելով Օսման փաշային ձեռքը սեղմեց և Մեծ գուրնին բրած գովեստները կրկնեց։ Օսման փաշան նորէն ոտք ելնելով խոնարհութիւն ըրաւ արտաւրուութեամբ։ Թուի կապոյտ վերապառնալով մը հագած էր՝ առանց իւր ատիճանը ցուցնող արտաքին նշան մ'ունենալու, և գլուխը կրմիր փէս մը դրած։ Յաղթահատակ և կորովի կազմաւոր ունեցող մարդ մ'է, կարճ և արեւմտեան մօրուքով, սև աչքեր և հումայեցի քիթ մ'ունի։ Դէմքին բոլոր դիմերը զորեղ և անվեհեր են, բայց սաստիկ յոգնութեան տալուութիւն մ'ունին։ Նայուածքը տըրտում, յամառ և խոլուն է։ «Վեհ գէմը մ'է սա»։ Գուցէ դադարեցի նայեալ գեղեցիկան որ հին ներկայ էր։ «Մեծ զորապետի մը գէմը է, ըսաւ Սերպէյէֆ զորավարն ուրախ։ «Ես զինքը տեսնելուս վրայ։ Կապի «է և կապի պիտի մնայ իւր պարտութեան հակառակ»։

Օսման փաշային սպայակոյտէն Լիվա Սաադը Լաշէմ փաշան գեկու, 21 թուով բումանիոյ վէրպիլքա քաղաքէն հետեւեալ հեռագրին ուղղած է Սպարապետի դրան։

« Բնէջնային կրթիկցային շարժա-
կան հիւանդարաններն հասանք, ուր
մեր վերաբերեց մեծ խնամք կը տար-
նի : Բուժանիոյ կարգիտ իշխանն ան-
ձամբ հոն գալով՝ ամեն մէկուն դատ
զատ այցելութիւն ըրաւ և հարցուց
թէ բանի մը պէտք ունի՞ն : Հրամա-
յեց որ մեծ պատուով նայուին Մեզ
համար ալ պատուիրեց որ իբր հիւր
նային մեզ և ոչ իբր օտար : »

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Վրէննա 26 դեկտ .
Քաղաքական վիճակին վերաբերեալ
գործոց բովանդակութենէն կը հասկցուի
թէ Անդրոյ և Ռուսիոյ մէջ պաղուծիւնն
որ քան զոր կը մեծնայ :

Լոնտրա 26 դեկտ .
Վուրվիչէն կը գրեն թէ պատերազ-
մական գործոց նախարարութիւնը բա-
ղում ուղարկած խնդրեր է կարճ պայ-
մանաժամով :

Պէրլին 26 դեկտ .
Ռուսիա՝ Անդրոյ խորհրդարանին ժա-
մանակէ առաջ գումարումն իմանալուն
պէս՝ հրամայեց իւր բոլոր գումարն նա-
ւերը վերել և իւր ծովեզերաց պաշտպա-
նութեան համար հարկ եղած միջոցները
ձեռք առնուլ :

Բեռլին 27 դեկտ .
Լրագիրը կը ծանուցանեն թէ Օսման
փաշան Մոսկուա պիտի բնակի :

Լոնտրա 27 դեկտ .
Լորտ Պրոքտորի կրթիկ վերաբերեալ
մէջ երկար տեսակցութիւն մ'ըրաւ թա-
ղուհոյն հետ :

Նախարարաց ժողովն այսօր դուռնա-
րեցաւ :

Փարիզ 27 դեկտ .
Հրաւէր եղաւ Տոն Քարտի որ Ձը-
րանայէն մեկնի :

Լոնտրա 27 դեկտ .
Անդրոյ կառավարութիւնը խնդրեց
Ռուսիոյ կառավարութենէն որ իրենց իտ-
ցնէ թէ ինչ պայմաններով խաղաղու-
թիւն կը լինուի պիտի հասնի : Արքայազն
Իլյուսինի պատասխանը պիտի որոշէ Անդ-
րոյ իշխանը զիբը : Հոս ոչ ոք կը տա-
րակուի թէ Ռուսիոյ աշխարհի պայման-
ներ պիտի առաջարկէ որ հաշտութիւն
չպիտի կրնայ կըրուիլ :

Պուրթէ 28 դեկտ .
Դանուրի ստորոցները քննին տարին
Նիկիոյ ի կամուրջը : Զինքով պայկ կամուրջ-
ներն ալ քայքայման վտանգի մէջ են :

Բեռլին 28 դեկտ .
Սթան Ռիւս լրագիրը կըսէ թէ Անդ-
րոյ խորհրդարանին ժամանակէ առաջ
գումարումը քաղաքականութիւն տալ է Դը-
րան՝ զինքնաշարժը շարունակելու :

Հոս 28 դեկտ .
Փարիզի Իտալական դեսպան Զիւլտի-
նի զորավարն հրաժարական տուաւ :

Լոնտրա 27 դեկտ .

Օսմ. քոնս.	8 7/16
Փոս.	1863 8 7/8
»	1869 8 3/8
»	1871 34
»	1872 1 3/4
»	1873 8 1/4
»	Եղիպոս 33 1/2
Անգլ. քոնս.	94 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Դանուրի բանակին նախորդ հրա-
մանատար Մէհմէտ Սիլի փաշան Սպա-
րապետի գրան պատերազմական
խորհրդին անդամ անուանեցաւ :

Կը լսենք թէ Վեհ, Սուլթանին
հրամանաւ՝ ոչ-մահմանական քաղա-
քային պահապան զինուորներէն հինգ
անձ Վեհ, Սուլթանին բանակի օգ-
նական ընտրուել են : Այս անձինքն
են՝ Լ. Արիսթարքի պէյ, Բոսթաքի
էֆէնտի, Տիւրքան Եղուարդ պէյ,
Լիւիս Էֆէնտի և Սադուհ Էֆէնտի :

Մայրաքաղաքիս Աւստրո-Հուն-
գարական զեւսպան Զինքի կոման հինգ-

շաբթի օրը Բ. Դուռն երթալով՝
Մեծ-Եղար. քոսին և արտաքին գոր-
ծոց նախարարին հետ տեսակցեցաւ :
Յետոյ Սպարապետի դուռն երթա-
լով Վեհ. Բեհի փաշային այցելու-
թիւն տուաւ :

Թնդանութարանի վերաբերեալ
Վեհ. Տամատ Մահմուտ փաշան հո-
րեքշաբթի օրն Արքիանուպոլէն Կ.
Պոլիս վերադարձաւ :

Բ. Դուռն արտաքին գործոց նա-
խարար Վեհ. Սէրէր փաշան, Լա-
տինացոց ծննդեան տօնին առթիւ
այցելութեան դնաց Երուսաղան տէ-
թութեանց դեսպաններուն :

Լէվընթ Հէրլըտ կը ծանուցանէ
թէ Պէշիքայի ծովածոցը ներկայ ե-
ղանակին մէջ ապահով և յարմար
չըլլալով, Սնդղիոյ նաւատորմին
Զմիւռնիոյ մօտ վուրայի նաւահան-
գիստը գնաց, որ ապահով և ընդար-
ձակ պատասխարան մը կընծայէ ձըմ-
րան համար, Զմիւռնիոյ ալջատ մօտ
ըլլալով՝ պաշար հայթայթելու մեծ
գիւրգիլութիւն կուենայ :

Կայսերական կառավարութիւնը
Ղալաթիոյ գլխաւոր սեղանաւորներ-
էն յանձնաժողով մը կազմեց, որ-
պէս զի թիվադարման չափազանց
անկման առաջին առնուի միջոցները
խորհրդով տեղեկագիր մը ներկայե-
նալով Սոյն յանձնաժողովին անդամք
են՝ Պ. Պ. Զարիֆի, Սթէֆանովիչ,
Տըվօ, Վոն—Հաս և Մէրսէ :

Վիզնթիւս լրագիրն Յունաց
Պատրիարքական կոնգրակին ընթերց-
ման առթիւ տեղի ունեցած ցոյցերը
մեղադրելով՝ « Զինուորական ծառա-
յութեան խնդրոյն վրայ միաբեր-
հանգարտեցնել կը ջանայ, իր հա-
ւաստէ թէ քաղաքային զինուորու-
թեան անդամ ըլլալը քրիստոնէայ
հպատակները բնաւ չպիտի զրկուին
պատերազմի, այլ միայն իրենց քա-
ղաքացի մէջ բարեկարգութիւնն ու
հանգարտութիւնն անվրդով պահե-
լու պիտի գործածուին » հարկ եղած
ժամանակ :

Յիշեալ լրագիրը կը հաստատէ
նաև թէ Յունաց Պատրիարքը սոյն
զինուորագրութեան գործն աւելի
գիւրգիլեալ և բացառութեանց չըր-
ջանակն աւելի ընդարձակելու հա-
մար չ'նոր առաջարկութիւններ ըրեր
է Բ. Դուռն :

Յունական Թրաքի լրագիրն ալ
հետեւեալ տեղեկութիւնը կուտայ .
« Տիւրքերական Պատրիարքը վեր-
ջին անգամ արտաքին գործոց նա-
խարարին հետ ըրած տեսակցութեան
մէջ քաղաքային զինուորութեան կա-
նոնադրին գործադրութեան մէջ
պէտք եղած բացառութիւններն
յայտնեց :

« Արդ՝ ուրախութեամբ կրմա-
նանք թէ Բ. Դուռն յատուկ պաշ-
տօնադրով մը կը ծանուցանէ Պատ-
րիարքարանին թէ Պատրիարքին ա-
ռաջարկած բացառութիւններն ըն-
դունուած են : այսինքն՝ քաղաքա-
յին զինուորութեան ծառայութե-
նէն ազատ պիտի ըլլան 20 տարեկա-
նէն վար և 40 տարեկանէն վեր ե-
ղողները, դատաւորներն, մանկա-
վարները, կղերականներն, և այն
ամուսնացեալ և ամուրի անձինք՝
որք իրենց ընտանեաց միակնեցուկն
են :

« Կրմանանք նաև թէ Պատրիար-
քին խնդրանայ վրայ՝ Բ. Դուռն ու-
րոշեր է Յունաց ծննդեան տօնէն
վերջը գործադրել քաղաքային զին-
ւորագրութիւնը :

« Կրմանանք նաև թէ Պատրիար-
քին խնդրանայ վրայ՝ Բ. Դուռն ու-
րոշեր է Յունաց ծննդեան տօնէն
վերջը գործադրել քաղաքային զին-
ւորագրութիւնը :

« Բ. Դուռն յատուկ յանձնաժո-
ղով մը կազմած է, որոյ պաշտօնն է
ոչ-մահմանական մայրաքաղաքին
և զինուորագրութեան եղանակը
կանոնաւորել :

Երէյի Դայմագամէն եկած հե-
ռագիր մը կը ծանուցանէ թէ Տրա-
պիզոնէն եկող Օսմանեան Մէրսին շա-
գենաւն, որոյ մէջ 8000 չափ զօրք,
բաղմամբ ծանապարհօրդ և 200000
իրայի վաճառք և կարասիք կային,
ինչպիսիք առջև երկու Ռուսական
չոգենաւորու պատահելով, բռնուե-
ր և Ռուսական նաւահանգիստ մը տար-
ւեր է :

Վերջին օրերու Բուժիկ Հիւսարի
մէջ 22 տարեկան երիտասարդ Հայ
գործաւոր մը սպաննուեցաւ : Յիշեալ
երիտասարդը ճանաչան Հասան պէյ
անուն իրեն ծանօթ Թուրք մը տես-
նելով՝ մտերմական կերպիւր կը բա-
րեէ զայն՝ պարզապէս Հասան կոչե-
լով : Թուրքն որ գինով էր՝ բարկա-
նալով Հայ երիտասարդին այսպէս
առանց ամալանի իւր անունը տա-
լուն վրայ, գաշտով կը զարնէ զայն
աղբիւն, և կը ձգէ կը փախչի : Ե-
րիտասարդը վերցուելով հիւանդա-
նոց կը տարուի և քանի մ'օրէն կը
մեռնի : Իսկ ոճրագործը գեռ չէ
գտնուած :

Կէտիկ փաշա բնակեալ Հայ կին
մը, որ երկու զաւակաց մայր և մի-
անգամայն յղի էր, չորեքշաբթի օ-
րը տանը թաղուիլը (քիւր) մաքրած
ժամանակ մէջն իյնալով խեղդամահ
եղաւ :

Երկու խարդախ մարդիկ մայրա-
քաղաքիս մաքրատան գործակալնե-
րը խաբելով 30000 զրդի արժողու-
թեամբ ծխախոտի հակեր կը վերցը-
նեն ու կը վաճառեն : Այս խարդա-
խութիւնն երեւան եղելով, յիշեալ
ծխախոտը գնող ծխախոտները
բռնուեցան, և անոնց միջոցաւ վե-
րոյիշեալ երկու խարդախները գըտ-
նուեցան :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Ս Ն Ա Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է

16 դեկտ. ուրախ իրիկուն	9.13
17 դեկտ. շաբաթ առաւուս	
բացուեցաւ	9.20
ժամ 6 րե	9.24
Բուժիկի երկաթուղի	Փր. 24
Թղթաղրամ	Վր. 238
ԸՆԹՅՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹՈՑ	
Կ. Պոլիս 16 դեկտեմբեր	
Սուրբ Թէյնի բաժնի բաժ. Անգլ. լիւ.	3. 3
» Գլխաւորութեան	2. 6
Կ. Պոլիս Պանթալիս	3.40
Քրէտի Թէյնի բաժ.	2.28
Քրէտի Օսթրո-Թուրք	—
Փոս.	44
» 1863	45
» 1865	41
» 1869	41
» 1872	41 3/4
» 1873	41
Թրաքիայ	Օսմ. լիւ. 0 70

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ազգային վարչութեան խառն ժո-
ղովը երէկ գումարեցաւ :

Ս. Պատրիարք հայրն, որ բացա-
կայ էր, գարձեալ կը պնդէր իւր
հրաժարականին վրայ :

Ժողովը նկատելով որ այդ խնդ-
րոյն լուծումն իր ձեռնհասութեան
վեր է, որոշեց խառն պատգամա-
ւորութեան մը միջոցաւ աղաչել զՆ.
Սրբազնութիւնն որ բարեհաճի գէթ
մինչև Ծննդ. սպասել, և երթէ

այս ալ անկարելի համարի, Ազգ.
ժողով հրաւիրել :

Յիշեալ պատգամաւորութիւնն
այսօր պիտի ներկայանայ Ս. Պատ-
րիարքին :

Կը լսենք թէ Վեհ. Սէրէրիչէն
էֆէնտին Ն. Սրբազնութեան առող-
ջական վիճակն ըստ բաւականին գո-
հացուցիչ գտեր է . ուստի տարա-
կոյս չմնար այլ ևս թէ իւր հրաժար-
ման պատճառը միմիայն անձնական
տկարութիւնը չէ :

Արժանահաւատ աղբիւրէ տեղե-
կացած ենք թէ Ս. Պատրիարք հայրն
31 Եկեղեցականաց ապօրէն ընթաց-
քէն սատարիկ ցաւ զգացեր է, ուստի
և իւր հրաժարման գլխաւոր պատ-
ճառն ալ այդ է եղեր :

Գաւալի է տեսնել որ մեր եկեղե-
ցականներէն ոմանք՝ փոխանակ իրենց
կոչմանն ըստ արժանեղոյն պատասխա-
նելու, ազգին խաղաղութիւնը վեր-
դուրեւելու և երկաթաւորութեան որոմ
սերմանելու կը ծառայեն ի վնաս
ազգին և եկեղեցոյ :

Հինգ շաբթի իրիկուն Լէվընթ
Հէրլըտ մէջ հետեւեալ ուշադրու-
թեան արժանի նամակը կը տեսնենք :

ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ԶԻՆԻՈՐՄԻՐՈՒԹԻՒՆ

« Ներեցէք, որ ելած այլ ընդ-
այլոյ զորոյցներուն հակառակ՝ ապա-
հովմ՝ ձեզ թէ Հայոց եկեղեցական
Համագումար ժողովը՝ ոչ-մահմանա-
կանաց ալ քաղաքապահ զօրք գըր-
ւելու խնդրոյն սկզբունքը ընդունած
է : Եկեղեցական Համագումար և Ե-
րեւոյ. ժողովներն չէին կրնար մեր-
ժեւ այնպիսի սկզբունք մը՝ զոր Թուր-
քիոյ մէջ մտցնել փորձողները առա-
ջին անգամ իրենք էին : Հայ ժողո-
վարդը իրօք այս խնդիրը քանիցս
կայսերական կառավարութեան ու-
շադրութեանը ներկայացուցած է :
Դեռ վերջերս՝ Սահմանադրութեան
հրատարակութենէն յետոյ՝ նոր ու-
ստիկանութեան կազմուիլ սկսած օ-
րէն մայրաքաղաքիս հայազգիներէն
քանի մը հազար հոգի ոստիկանա-
կան ծառայութեան մէջ մտնելու
պատրաստուել էին, մինչդեռ իրենց
առաջարկը մերժուեցաւ չենք գի-
տեր թէ ինչո՞ւ համար :

« Հաւասարութեան այս սկզբուն-
քը օգտակար տեսնի մը մէջ գոր-
ծագրել յարմար դատուած չըլլա-
լուն՝ միշտ ցաւ յայտնելէ ետ չենք
կրնար մենք, որովհետեւ Թուրքիա
այս պահուս իր ձեռքին տակ պա-
տերազմի վարժ քրիստոնէայ զինու-
րականներ պիտի ունենար, որոնք
ինչպէս հաշտութեան՝ նոյնպէս և պա-
տերազմի տեսն պիտի կրնային մեծ
ծառայութիւններ մատուցանել երկ-
րին : օրինակի համար, 20 տարիէ ՚ի
վեր առանձնական քրիստոնէա Թուր-
քիոյ ասիական գաւառներուն մէջ
գործած այնքան մարդասպանու-
թիւններուն ու ըրած այնքան աւարա-
ռութիւններուն վրայ չպիտի նստե-
լինք ցաւէնք սպաս :

« Այսօր, զինուորական ծառայու-
թեան՝ ինչպէս նաև անոր գործադ-
րութեանը ընկերանայիք բարեկար-
գական միջոցներուն կոչմանից դուռ-
նուղները առաջին անգամ Հայերը
եղան :

« Բայց եթէ եկեղեցական Հա-
մագումար ժողովը այդ սկզբնական գոր-
ծագրութիւնը առաջ մ'ներկայ պա-

* Լրագրոյս Խմբագիր—Տնօրէնին աջ
ցուցամատին վրայ ծանր կերպաւ մ'երած
ըլլալով և գրիչ չկրնալ բռնելով, պարտա-
ւորեցանք Մէհմուտի Հալապի թաղու-
մանութիւնը դնել հաս :

ընդհանուր մէջ յետաձգել յարմար
գտնած է, ասով մեր կղերքը՝ նախ
քան զամենայն՝ անկեղծօրէն և խո-
հեմաբար վարուելէն զամբողջ բան
ըրած չէ, որոյ համար անշուշտ նոյն
խիկ կառավարութիւնը չնորհակալ պի-
տի ըլլայ: Ամեն մարդ գիտէ թէ հա-
սարակայ և մանաւանդ Օսմանեաց
կարծիքը՝ քրիստոնէիցմէ ալ քաղա-
քապահ զինուոր առնելու խնդիրը
ինչ կերպով կը նկատէ տյուր: Կը հա-
մարձակիմք թէ կառավարութեան
գլուխը գտնուող խոհմէ և լուսաւոր-
եալ անձանց մեծ մասը այնպիսի խոր-
հորդի մը հետեւած են, որոյ գոր-
ծադրութիւնն այլ ևս չէին կրնար
արգելել, և թէ նոյն իսկ այս խոր-
հորդին անմիջական գործադրու-
թեանը ատեն յառաջ գալիք դժ-
ւարութեանց առաջին անգամ հա-
գիտողները նոյն իսկ իրենք եղան:

« Գայտի ի նաեւ թէ թշնամու-
թեանց սկուած պահուն, առաջին
անգամ Ռուսիա եղաւ որ ըսկ երկ-
րակալութիւնը ընկելու նպատակաւ ըս-
կըսած արշաւանք մը սուրբ պա-
տերազմն անուանեց: Ասի կեղծ էր,
պրովհետեւ կա՞յ Գաղեօք միամիտ
մարդ մը որ այդ տերութեան նը-
պատակը չգիտէր: Բնականօրէն
է նաեւ թէ թշնամուցն այս մեղադ-
րանաց արժանի յայտարարութեան
հակահարուածը իր հակառակորդին
վրայ ալ ծանրանալով, թուրքիա ալ
սկսաւ իրաւամբ նմանօրինակ զգա-
ցուններ տածել իր մէջ: Բնոր
ընմէ կրնայ ուրանալ թէ երկու պա-
տերազմն տէրութիւնները մինչև
այսօր կը կարծեն թէ ըսկ կրօնքի
փրկութեան համար պատերազմելով
կը մտնին: Այս այսպէս ըլլալով,
մեր պետական անձինքն նախագէ-
տը պայքար ըլլալու են թէ ոչ—մահմե-
տականաց զինուորապետութիւնը իրա-
գործելու, ամեն մէկ ժողովրդեան
մէջ միևնոյն պարտուց և իրաւանց
զգացունները տածելու, և վերջա-
պէս կրօնքի պատուէրը կացութեան
պահանջմանցը հետ համաձայնեցնե-
լու համար որչա՞փ զգուշաւորութիւն
հարկ է:

« Զկայ ընկերական կենաց մէջ
պայման մը, յորում պատուոյ գի-
րադրածութիւնը այնքան մեծ ըլլայ
որքան զինուորական անպարէզին մէջ:
զինուոր արհեստը անաշուտ արդա-
րութիւն և կատարեալ հաւատարմու-
թիւն կը պահանջէ: Պէտք է անկեղ-
ծօրէն խոստովանել թէ դիպաց յա-
ռաջ բերած խառնաշփոթ կացու-
թիւնը՝ հաւասարութեան անմիջական
գործադրութեանը դէմ տեսակ մը
գծկամակութիւն ցոյց տուած ըլլա-
լը ի վեր կը հանէ, որու մէջ գեռ
Հայ ազգը չէրդ կը կենայ: Ահա ա-
սոր համար է որ այս մասին պա-
հանջման եղանակ առ այժմ այնքան
անիրաւ է՝ որքան տարածում:

« Եկեղեցական Համագումար ժո-
ղովը իր նիստին մէջ գլխաւորաբար
Հայոց ազգին իրական շահերն ու
մեր ազգէն դուրս մտաց տրամադ-
րութիւնը ուղղութեան առաւ, և
անկեղծօրէն իր համբը յայտնելով
կառավարութիւնը՝ չորսըորթեալ չը
նայեցաւ: Նաեւ խոհեմաբար առաջ-
ընն առաւ այն ամեն տեսակ կառ-
կածանաց և բարեբոյժ, որոնք կրնային
յառաջ գալ այնպիսի պահուն մը,
յորում պէտք է որ մահմետականաց
և ոչ—մահմետականաց մէջ ամենա-
կատարեալ համաձայնութիւն մը տի-
րէ:

« Յիստորիկիցմէ ալ քաղաքապահ
զորք առնել հրամայող կայսերական
հրովարտակը ամենէն առաջ աչքի
գարնող նպատակ մ'ունէր, այն է
մահմետականաց և Օսմ. տիրապե-

տութեանը տակ գտնուող զանազան
ազգաց մէջ եղած միութեան և հա-
մաձայնութեան կապերը ամբողջ նը-
րոպիոյ ցոյց տալ: Այս գլխաւոր կէ-
տը ի վաղուց ձեռք ձգուած է ար-
գէն: Կայսերական կառավարութիւ-
նը կրնար ճակատադէմ յայտնել
զայն, որովհետեւ ամենէն աւելի Հա-
յերը՝ անուրանալի ազգայնայնեան ի-
րենց անդրգուշելի հաւատարմութիւ-
նը ցոյց տուած են միշտ:

« Մայրաքաղաքի» ինչպէս նաեւ
գաւառներուն մէջ՝ ամեն ազգ. ան-
խառն ընդհանուր գործին մասնակ-
ցած է. բայց մանաւանդ Ասիոյ Հայ
ժողովրդեան ըրած աշխույժութիւնը
անբաղդատելի համեմատութեան մը
հասած է: Սակայն ասով հանդերձ
Հայերը բնաւ չեն պարծիր, ինչպէս
նաեւ իրենց վրայ ծանրացած անառ-
նելի և աղետաբեր զոհողութեանց
համար իրենց բերնէն ամենափոքր
արտունջ մը չեն հանած: Կառավա-
րութեան ձեռնադրութիւնը ընկելու
համար երբէք չվարանցան, և մի-
շու իսկ ամենէն խեղճուի գիւղացի
Հայ մշակը՝ ամեն հարկերը վճարելէ
ետեւ, իր միակ յոյսն եղող սայլը,
եղն ու ձին ձրիաբար կայսերական
բանակին պիտոյնցը դահց. . . Այն-
պիսի անուրանալի իրողութիւններ
են ասոնք, զոր ամեն պարկեշտ և
խղճմտանքի տէր մարդիկ կը խոս-
տովանին:

« Եթէ ողջամտութիւնն ու աղա-
տութիւնը ո՞րքէ է, Եկեղեցական Հա-
մագումալ ժողովը ալ անմիջական զին-
ւորադրութեան գործնական դժ-
ուարութիւնները նշմարելով՝ անկեղ-
ծօրէն զայդ ըրած ըլլալուն համար
յանցապարտ է. գուցէ լուսնայն
«ոչ» ի յանգու պայմանական «այո»
ով մ'այդ առաջարկութիւնը ընդու-
նէին նէ աւելի աղէկ ըրած պիտի
ըլլային. պէտք է՝ լըտուի գուցէ՝ Ե-
րեսանց բան մ'ընել լմնցնել, բայց
այսպիսի ծանրակշիռ պարագայներու
մէջ՝ Հայը իրաւամբ կրնայ պարծիլ
իր անկեղծ ըլլալուն վրայ:

« Սա՛ ալ պէտք է ի նկատի ունե-
նալ թէ, յանկարծ իսկ մը քաղա-
քացիներ իրենց աշխատութեանէն
արհեստէն և վաճառականութեանէն
եաւ կեցնելով՝ ընկերական տնտե-
սագիտական և վաճառականական
տեսակետին ներքեւ աշխարհի ան-
կարգ կացութիւնը մը յառաջ պիտի
գալ, որոյ որչա՞փ ծանրակշիռ ըլլալը
նկատողութեան առնելու է: Ամեն
ատեն գիւղացական միջոցները՝ ա-
մենէն փրկարարը չեն ըլլար:

« Ասկէց զատ Հայոց Պատրիարքա-
րանն այդ մասին տակաւին վերջա-
կան ու է որոշում մը տուած չէ,
ուստի և չենք հասկնար թէ ինչ
հարկ կար ունենց հրապարակը նետ-
ուելով մէկէն, գեռ վերջնական լու-
ծումը չտալով խնդրոյ մը վրայ եր-
կար բարակ քննադատութեան ել-
նելու:

« Մեր կը կարծեմք թէ այսպիսի
տեսն մը, յորում հասարակայ երե-
ւակայութիւնները զգացունքն ու
կիրքը գլխաւորաբար գրգռուած
են, խոհեմութիւնը կը պահանջէ ո
և է հասարակութիւն մը յանձնառի
մեղապարտ կամ յանցաւոր ցոյց
տալէ զգուշանալ: Միաբանութիւն
քարոզելը և երկպառակութիւնն ու
չտեսնանք:

« Թշնամանքը փոստաբանել չէ.
և ոչ ոք կարող է ապագայանել՝
օրինակի համար՝ թէ Հայոց թով
քաղութիւն և օրինաւորութիւն չը-
կայ, մինչդեռ իրողութիւնները դու-
րա հակառակը հաստատած են: »

ՀԱՅ ՄԸ

Բուժանիոյ Գործնական Գիտութիւն
տեսնալը գործած է մեզ ի հրատա-
րակութիւն:

Փոքրան 30 նոյ. 1877

Բաւերն իրարու տեղ դնել,
և կամիլ որ այլք ձեր իսկ չհա-
ւատացածին հաւատան, տակ-
մեծ թիւն մը կա՞յ:

Վ. Լ. Է

. . . Խմբագիր .

Պատուական լրագրի 2044, 43 և 46
թիւերուն մէջ Պ. Արշակ Աթիւնեանի մեր
հոյս. . . 1 թուականաւ նամակին ի պա-
տասանի մի գրութիւնը տեսանք:

Մենք, ինչպէս արդէն յայտնած էինք,
պատիւ չունինք յիշեալ պարոն ճանչելու,
ուստի ցաւ է մեզ որ իր տեսարանին Բու-
մանիոյ նկատմամբ և մասնաւորապէս
Փոքրանու վերաբերեալ կէտերն ուղղելու
առթիւ իրեն մի ժամանակակից ականա-
տես պատմութեան ծառայութիւն մի մա-
տուցած անհնին՝ յիշեալ պարոնը ինք-
զինքը վերաւորուած գտնի է. բայց մեր
նպատակը Պ. Արշակայ անչ. չըջալիք,
այլ իւր գրուածոց այն կէտերը՝ որոնք
իրեն պատմական իրողութիւնը թէ՛ ի
ներկային և թէ՛ յապագային մեր սիրելի
ազգին կրնան սխալ դադարեցնել տալ:

Այսու ամենայնիւ դո՞ւ եք որ Պ. Ար-
շակ, մեր հերքման դրոյն կարեւորութիւ-
նը ճանչելով հանդերձ, երբ նոյն իսկ մեր
ուղղած կէտերը հերքել կը փորձէ՝ աւելի
հաստատութիւն կուտայ անոնց, թէ պէտ
և երբեմն մեր գրուածքին իմաստը այն-
չափ հարապատարար չմեկնելով, չըսենք
թէ « քնն. հասկում », որով յաւանդու ըս-
տիպուած ենք զրիչը ձեռք առնուլ և բա-
ւերուն իրողութիւններէ ունեցած տար-
բերութիւնը ցուցնել, որովս գի նոյն իսկ
Պ. Արշակ Աթիւնեան ալ բարեհաճի հա-
մադրել թէ մեր նախորդ գրուածքը իւր
պատասխանով փոխանակ հերքուելու՝ ա-
ռաւել հաստատուած է, և թէ իր տե-
ղեկագրութեան այն կէտերուն ազդե-
րներն այնչափ արժանահաւատ գտնուած
չեն:

Պ. Արշակ իր Փոքրան գալը՝ հաստա-
տելու մտքը կրէ թէ « նոյն քաղաքի
Լուի Բուրիկ (?) օթելը եօթն որ նստած
ըլլալով՝ շատ դարձաւ » ի նպատակ աչքի
ճանաչողը կը քննարկէ ազգայնոց մը այ-
ցնելու անսարքութիւններն տեսնե-
լով »

Փոքրան այնչափ մեծ քաղաք մը չէ,
և Հայք ալ այնչափ բազմաթիւ չեն, այն-
պէս որ եթէ պարոնս Հայ մը մեր քա-
ղաքը հասնի, ըստ Հայք անմիջական
կիմանան, ո՞ր մնաց որ Պ. Արշակ Աթ-
իւնեանի պէս ի նպատակ ազգին ճանաչող-
ըող մէկը եօթն օրուան մէջ անձնօթ-
մնաց համայն Փոքրանցոց: Կարելի է թէ
կամ ծովտեալ եկած է և կամ անհետկին
մէջ փակուած մնացել է:

Այլ մնայ մեզ այսպէս հետեցնել ըստ
Բուժանիոյ մէջ այսպիսի ատեն միայն
նկատմամբ, ինչպէս Պ. Արշակը հետե-
ցուցեր է իր Փոքրան մնալու:

Պ. Արշակը կը գտնուի թէ իր տե-
ղեկագրութիւնը ազգին փախաբանաց հա-
մաձայն չէ, ըսած ենք:

Մենք, անձնատարար Ծրած էինք թէ՛
« Կամ այն է որ իրեն անձնօթ և ձը-
« մարտախօսութեան ու արժանահաւա-
« տութեան կողմանէ կասկածելի անձանց-
« մէ քաղաք է իւր հրատարակած տեղը:
« Կուլիւնները, կամ այն է որ յաներե-
« ւայթ ներկայացներ է Բուժանիոյ հայա-
« ընակ քաղաքները, և փողոցներէն քաղե-
« լով ի լոյս ընծայեր է. այս երկու պա-
« բազայից մէջ ալ իր տեղեկութիւնն ազ-
« գին փախաբանաց չհամապատասխա-
« ներ: »

Պ. Արշակ ազատ է նախադրեալներն
ու եղրակացութիւնն իրեն զատ զատ եզ-
րակացութիւն ըմբռնել, բայց այս ան-
բաւարար զմեզ իր կարծեաց վրայ հա-
մադրելու տեղ առաւել ևս իրաւունք կու-
տայ մեզ ըսելու թէ, լաւ է բնաւ Բուժա-
նայի Հայոց քննարկութեանը չըսենք,
այն թէ զայն անհարգաւոր և անարդէ
կուլիւններէ առաւել, պատասխար և Հայոց
քաղաքներէն քննարկութեանը չըսենք անհարգ-
աւոր, ունենալ: Յաւանք է որ Պ. Արշակ
160 անգամ ծախս ալ ըրեր, և այդ աստ-
նէլէ ճամբորդութեան ձեռնարկելէ զատ
տեղեկագրութեան մը տպագրութեան
բեռն ալ յանձն առնելու աշխատութիւնը
կրնէ:

Պ. Արշակը իւր տեղեկագրութեանց
արժանահատութեան արժէքը ցուցնող
սա կէտին համար ալ թէ « պէտք է իւր
« բարեկամը տեղուց Հայոց անհաւան-
« զիր ներկայացներէն վկայուած ի-
« նն արուած տեղեկութիւնը, կրնէ թէ
« կը գտնուի՝ այդպիսի անհաւանակի
« անձ մը՝ որ իր վարչութեանը վրայ
« տեսնուած թերութիւններուն վկայու-
« թիւն տայ: »

Մենք անհաւանակի ներկայացուցիչ-
ներ ըսելով ոչ վարչական մարմին կը հաս-
կնենք և ոչ ազգային կամ եկեղեցական
պաշտօնեաներ, այլ ո՛ր է և պատուաւոր
անհատ ազգային, որուն ազգին ներկա-
յացուցիչ անունը ազգին պատու կրնայ
բերել: Ասկէ զատ Բուժանիոյ Հայոց վը-
րայ արժանահաւատ և ճշմարիտ տեղեկու-
թիւններ քաղելու համար հարկ չկայ ըստ
Պ. Արշակայ, ազգային կեդրոնական վար-
չութեանն արտօնողը ձեռքն ունենալ, և
ոչ իսկ այնպիսի մեծ դուռերի մը քանդի
առանց ասոնց ալ ու է « Գաղեօք » վիճա-
կագիր կրնայ իր նպատակին հասնել,
այսինքն ստոյգ և արժանահաւատ տե-
ղեկութիւններ քաղել, չէ թէ Պ. Արշա-
կայ ըսածին պէս ուղղած տեղը և ուղղած
տեղը քաղել և մտնելով, այլ պէտք է քա-
ղել և պէտք է քաղել քաղել:

Գալով Պ. Արշակին տեղեկագրութեան
Փոքրանու Հայաստանեայց ընկերութեան
ուսարանին ապօրինի անունը կրելու ար-
դարացուցման, ոչ նորա յատուկ և ոչ
հասարակ նամակաւ չենք կրցած ինք-
զինքնիս համուզել թէ ինչպէս կը ըլլայ որ
կ. Պոլսոյ Լրագիր պատուական թերթին
միջոցաւ քանի մը ամիս շարունակ հըրա-
տարկուած տեղեկութիւն մը երբ կար-
գը տեղադրել վերածելու կուգայ, ասոր
ստարանի զինքու հարկը կ'զգացուի, (Պ.
Արշակ արդէն կը հասկնայ ինչ ըսելու
զենք), և ինչպէս կը ըլլայ որ ասոնց մեր
ընկերութեան հաւանութիւնն ու արտօ-
նութիւնն ատանալու անոր ստորագրու-
թիւնը կամ ինքը տեղադրելի մը վրայ կը
գրուի: Որ օրէնք և ո՞ր ընկերական դը-
րութիւն կը ներքէ ուրիշի մը քաղին առ-
նուլ կամ ուրիշի մը ստորագրութիւնը
խաղախել, և ասոր ի փոխարէն բարի
նպատակի մը վերագրելու պահանջուն
ընել, ինչպէս կրնէ Պ. Արշակ: Արդեօք
Պ. Արշակ գիտէ՞ թէ մեր ընկերութեան
տակի մեծութիւն մը տալու և այսպիսի
միջոցներով ընդհանուր ազգին ծանօթա-
ցնելու փախաբան երկրորդ օրինաց հա-
մաձայն եղեւնադատ անանկներու առ-
ջն կը պատկուի:

Գործակցութեան խնդրոյն նկատմամբ
ալ Պ. Արշակ կը հարցնէ թէ « Լրագրոյ
« միջոցաւ անձի մը զմի անխաւարտ
« թշնամանքը թշնամանեալ կրնայ լըմ:
« Բազիրը մեղադրուած ճանաչուլ » չը
կըցուի թէ Պ. Արշակ այս բառերով ինչ
հարցնել կուզէ, միայն սա կրնէ որ
թէ՛ թշնամանոց մը և թէ՛ թշնամանաց
հրատարակչը ըստ քաղաքակրթ. աշ-
խարհի ընդունած Բոս. Նաբէլեօն օրինա-
գրութիւն արամադրութեանը համաձայն
գրելէ հաւաստաւոր, կատարատանուին
ու կըդատաւարաւորին, և ահա այս սկը-
բամը մերթեմինք ու կը մերժենք Պ. Ար-
շակայ մեզ ընծայած ապօրինի պատկը:

Տեղեկագրութեան բառին վրայ զի-
տուցութիւնն ալ մերժելու կը դիմէ Պ.
Արշակ, ըսելով թէ « աղարակի մը, թատ-
« բոնի մը, և մինչև անգամ հանդիսի մը
« թէ մէջը և թէ գուրը տեսնուած հե-
« տաքքորական բաներ չմտնալու և կամ՝
« ուրիշի մը հարողդելու համար ի վեր
« կ'առնենք, կըլլայ Տեղեկագիր: »

Պ. Արշակ ազատ է ամեն տեղեկու-
թիւն, ամեն ծանօթութիւն, ամեն նկա-
րագրութիւն, ամեն տեղագրութիւն, ա-
մեն վիճակագրութիւն և ամեն գիտողու-
թիւն քննարկութեանը թաւով մը տալ:
Բայց մենք ալ կարծենք իրաւունք ունինք
ամեն բառ իր բուն նշանակութեամբ
ճանչնալ ու հասկնալ:

Մնացեալ յաջորդ Խոսք

. . . Խմբագիր Մասիս պատուա-
կան լրագրոյ .

Կը խնդրեմք Ձեր Մեծապատուու-
թեանն որ բարեհաճիք հրատարակել
հետեւեալ Ձեր պատուական լրագրոյն
մէջ:

Բ. ՀՐԱԽԻՐ

ԱՌ ՀԱՅ ԳՐԱԾԱՐՍ

Կը ծանուցուի ամեն Հայ գրաշա-
րաց՝ որք իրենց ամառային վիճակին
բարեւորմանը փախաբան չընեն, անհը-
րաժեշտ պարտաւորութիւն կայ իրենց
ներկայ գտնուիլ յառաջիկայ իրական
դեկտ. 18 ժամ ճիշդ Յին Ղալաթիա
Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մօտ Հայ-
կական սրճարանը, ուր տեղ պէտք
եղած կարգադրութեանց վրայ խոր-
հորդածութիւններ պիտի ըլլան:

1877 դեկտ. 16

Ի Գիմաց

Մասնաժողովոյ

Յ. Չաւառեան

Յ. Պարսեան

Ղ. Փաշաւեան

Յ. Կարապետեան

